

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Սերոբ Անտինյան

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային արժեքների պահպանության գործակալության պետի տեղակալ

- **ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Փարիզ (Ֆրանսիա), 28 մայիս – 1 հունիս

- **ՆՊԱՏԱԿԸ**

*Մասնակցություն՝*

*Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցառումների մասին» 1970 թ. Փարիզի կոնվենցիայի անդամ պետությունների Օժանդակ կոմիտեի (Subsidiary Committee) 6-րդ նստաշրջանին,*

*Մշակութային արժեքների՝ ծագման երկիր վերադարձի կամ ապօրինի յուրացման պարագայում դրանց ռեստիտուցիայի խրախուսման հարցերով միջկառավարական կոմիտեի (ICPRCP) 21-րդ նստաշրջանին,*

*ինչպես նաև նույն կոնվենցիայի շրջանակներում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր քարտուղարի կողմից կազմակերպված «Ընդհանուր մշակութային ժառանգությունը և մշակութային արժեքների տեղաշարժը» խորագիրը կրող կոնֆերանսին:*

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ մշակույթի նախարարության, հանդիսանում է 1970 թ. Փարիզի կոնվենցիայի (ՀՀ-ը անդամակցում է կոնվենցիային 1993-ից) անդամ պետությունների Օժանդակ կոմիտեի անդամ (2015-ից), ինչպես նաև Մշակութային արժեքների՝ ծագման երկիր վերադարձի կամ ապօրինի յուրացման պարագայում դրանց ռեստիտուցիայի խրախուսման հարցերով միջկառավարական հանձնաժողովի անդամ (2017 թ. նոյեմբերից): Նշված հանձնաժողովների նիստերը պարբերական են (ամենամյա կամ երկու տարին մեկ), որին հայաստանյան պատվիրակությունը ունենում է պարտադիր մասնակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության և պետական լիազոր մարմնի (մասնագիտացված կառույց) ներկայացուցչի կազմով:

Հանձնաժողովներին անդամակցությունը և մասնակցությունը տեղի ունեցող նստաշրջաններին մեծ կարևորություն ունեն ինչպես վերը նշված կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման, կոնվենցիայի լիարժեք կիրարկման, այդ ուղղությամբ իրականացվող ներպետական ընթացակարգերի կատարելագործման, այնպես էլ ՀՀ մշակութային քաղաքականության իրականացման համատեքստում միջազգային կապերի ու համագործակցության ընդլայնման, փորձի փոխանակման, լավագույն իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրման և ներդրման առումներով:

Հանձնաժողովները կոչված են կոնվենցիայի կիրարկման շրջանակներում մշակել և անդամ պետություններին ներկայացնել մասնագիտական ուղեցույցներ, առաջարկներ, մեթոդաբանական և այլ փաստաթղթեր: Հանձնաժողովների նիստերին քննարկվում և ընդունվում են բանաձևեր, առաջարկներ, հավելվածներ և այլ փաստաթղթեր, որոնք տրամադրվում են պետություններին կատարման նպատակով: Մասնակցությունն այդ փաստաթղթերի մշակմանը, ՀՀ մշակույթի նախարարության տեսակետների և դիրքորոշումների ամբողջական ներկայացումն ու ընդգրկումը այդ



փաստաթղթերում կարևոր նշանակություն ունի իրականացվող մշակութային քաղաքականության և միջազգային համագործակցության տեսանկյունից:

**1970 թ. կոնվենցիայի անդամ պետությունների համաժողովի Օժանդակ կոմիտեի (Subsidiary Committee) 6-րդ նստաշրջան (մայիսի 28-29-ը)**

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցերն էին՝

- ✓ Օժանդակ կոմիտեի ղեկավար կազմի՝ Բյուրոյի ընտրություններ (Նախագահ, փոխնախագահներ, զեկուցող),
- ✓ Քարտուղարկության զեկույցը 2017-18թթ. ընկած հաշվետու ժամանակաշրջանում իր գործունեության վերաբերյալ,
- ✓ Անդամ պետությունների կողմից լրացված հարցաշարերի ամփոփում,
- ✓ Վտանգված մշակութային ժառանգություն. Հակամարտության գոտիներում իրականացվող միջոցառումներ,
- ✓ Կոնվենցիայի կիրարկման լավագույն փորձի ներկայացումներ մի քանի երկրների օրինակով (ռեստիտուցիա և ազգային օրենսդրության կիրարկում),
- ✓ Միջազգային համագործակցությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործընկեր կազմակերպությունների հետ (UNIDROIT, CoE, INTERPOL, WCO, ICOM)

1. Նստաշրջանը մեկնարկեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր քարտուղարի մշակութային ժառանգության հարցերով ներկայացուցչի ողջույնի խոսքով, որից հետո ներկայացվեցին նստաշրջանի օրակարգային հարցերը, ընդունվող փաստաթղթերը: Օրակարգերը հաստատվեցին:
2. Տեղի ունեցան Օժանդակ կոմիտեի ղեկավար կազմի Բյուրոյի ընտրություններ: Բյուրոյի նախագահի պաշտոնում առաջադրվեց Եգիպտոսի ներկայացուցչի թեկնածությունը: Քարտուղարի (զեկուցող) պաշտոնում առաջադրվեց Ջամբիայի ներկայացուցչի թեկնածությունը: Որպես փոխնախագահներ առաջադրվեցին

Ալբանիայի, Կիպրոսի, Բուլղարիայի և ներկայացուցիչները: Առաջադրված բոլոր թեկնածությունները հաստատվեցին: Այսպիսով՝ հաստատվեց **1970թ. Կոնվենցիայի Անդամ պետությունների հանդիպման Օժանդակ կոմիտեի Բյուրոյի կազմը՝**

**Նախագահ՝ Եգիպտոս (անվանական),**

**Զեկուցող՝ Զամբիա (անվանական),**

**Փոխնախագահներ՝ Ալբանիա, Կիպրոս, Բուլղարիա (ներկայացուցիչների միջոցով):**

3. Քարտուղարության զեկույցը հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների մասին ներկայացրեց Սթրոնգ Լենգը: Խոսվեց 2017թ. մայիսից մինչ այժմ իրականացված աշխատանքների, մասնավորապես՝ UNITWIN կրթական ծրագրի, արագ արձագանքման խմբերի, միջազգային և տարածաշրջանային համագործակցության (UNIDROIT, INTERPOL, WCO, EU) և նոր գործընկերների, ծրագրային նախաձեռնությունների, արտակարգ միջոցառումների, ինչպես նաև իրականացված ուսուցողական ծրագրերի և կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների մասին:

Առանձնահատուկ նշվեց պետությունների կողմից Կոնվենցիային միանալու և վավերացնելու հանգամանքը: Ընդգծվեց, որ ներկայումս Կոնվենցիային միացած են 136 երկիր: 2017 թվականին Կոնվենցիան վավերացրել են Բոտսվանան (23 օգոստոս) և Եթովպիան (22 հոկտեմբեր):

Այլ կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում, Քարտուղարությունը առանձնացրեց թանգարանների, առևտրի սրահների (art market) աշխատանքը: Նշվեց, որ 2018 թվականի հունվարի դրությամբ Թանգարանների միջազգային խորհուրդը հրատարակել է Յեմենի վտանգված մշակութային արժեքների ցանկը (Red List):

4. Կոնվենցիայի կիրարկման արդյունավետության բարձրացմանը վերաբերող հարցաշարի կապակցությամբ տեղի ունեցավ ամփոփ զեկույց: Նշվեց, որ Օժանդակ կոմիտեի նախորդ նիստին ընդունված որոշման (5.SC.6) համաձայն, անդամ պետությունները Քարտուղարություն են ներկայացնում 1970 թ. Փարիզի կոնվենցիայի կիրարկման խթանմանը և արդյունավետության բարձրացմանը վերաբերող լրացված հարցաշարը: Այն ներառում է Կոնվենցիայի կիրարկման



իրավական ընթացակարգերին, վերադարձին և ռեստիտուցիային, խորհրդատվական կոմիտեների հարաբերություններին, առկա գործիքակազմերին, կրթական և կարողությունների զարգացման ծրագրերին և այլ ոլորտներին՝ պետությունների ունեցած ներկա առնչություններին և զարգացման տեսլականին: Քարտուղարությունն ընդգծեց, որ մինչև սահմանված ժամկետը՝ 2018 թ. մարտի 6-ը լրացված հարցաշարեր ներկայացրել է 40 պետություն:

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ մշակույթի նախարարության (մշակութային արժեքների պահպանության գործակալության՝ որպես պետական իրավասու կառույց) պահանջվող հարցաշարը պատշաճորեն լրացրել և ՀՀ ԱԳՆ միջոցով ՅՈՒՆԵՍԿՕ-ի Քարտուղարություն է ներկայացրել ս. թ. հունվարի 31-ին: Այն տեղադրված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական կայքում՝

<http://www.unesco.org/new/en/culture/themes/illicit-trafficking-of-cultural-property/subsidiary-committee/6th-sc-session-2018/states-parties-responses-to-the-questionnaire/>

Ի համեմատություն բազմաթիվ այլ (այդ թվում՝ եվրոպական) երկրների, լրացված հարցաշարը առավել համընդգրկուն է, ինչը խոսում է Կոնվենցիայի արդյունավետ կիրարկման գործում Հայաստանի Հանրապետության կողմից մշակված և ընդունված ներպետական իրավական կարգավորումների առաջանցիկ և ամբողջական լինելու մասին:

5. Օրակարգային հաջորդ հարցը ՅՈՒՆԵՍԿՕ-ի իրականացրած գործողություններն էին արտակարգ իրավիճակներում, մասնավորապես հակամարտության գոտիներում իրականացված հատուկ միջոցառումները: Նշվեց, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերին համապատասխան, Քարտուղարությունը իրականացրել է մշակութային արժեքների և, մասնավորապես, հնագույն առարկաների (artefacts) պաշտպանությանն ուղղված միջոցառումներ Իրաքում, Սիրիայում, Յեմենում և Լիբիայում: Ձեկույցներ ունեցան և նյութեր (presentations) ներկայացվեցին վերոգրյալ երկրների պատվիրակները: Դրանք հիմնականում ներառում էին ինչպես հնագույն մշակութային ժառանգության պահպանության և անվտանգության հիմնախնդիրները և կարգավորումները, այնպես էլ տեղական

իշխանությունների ակտիվ գործողություններն ու համագործակցությունը այս ոլորտում:

6. Կոնվենցիայի կիրարկման լավագույն փորձի փոխանակման խորագրի տակ ներկայացվեցին ապօրինի արտահանված մշակութային արժեքների վերադարձի և վերահանձնման (ռեստիտուցիայի) մի քանի դեպքեր (Մեքսիկա, Վենեսուելա, Հայաստան):

**Հայկական պատվիրակության անդամ, ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչ Սերոբ Անտինյանը** միջազգային համագործակցության շրջանակներում մշակութային արժեքի վերադարձի թեմայի ներքո **ներկայացրեց զեկույց** 2017 թվականին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տեղի ունեցած արդյունավետ համագործակցության վերաբերյալ:

Խոսքը վերաբերում է 1995 թվականին Երևանի Ռուսական արվեստի թանգարանից գողացված, ապա՝ Ռուսաստանում հայտնաբերված ու 2017 թ. նոյեմբերին Հայաստան վերադարձված ռուս աշխարհահռչակ նկարիչ Միխայիլ Վրուբելի հայտնի գրաֆիկական աշխատանքին:

1995 թ. Ռուսական արվեստի թանգարանից (պրոֆեսոր Ա. Աբրահամյանի հավաքածու) կողոպտվել էր հանճարեղ նկարիչ, ռուսական մոդեռնի հիմնադիր Միխայիլ Վրուբելի «Դևն ու Հրեշտակը Թամարի հոգու հետ» գլուխգործոցը: Հանրապետության այդ ամենարժեքավոր թանգարանային նմուշներից մեկի առևանգումը երկրի և նրա մշակութային ժառանգության հանդեպ գործած խոշորագույն հանցագործությունն էր:

2017 թվականի մարտի 16-ին, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության նախագահների պաշտոնական հանդիպման ժամանակ, հայտարարվեց նկարի հայտնաբերման մասին: Նույն թվականի նոյեմբերի 15-ին, Ռուսաստանում Հայաստանի օրերի շրջանակներում, Պետական Տրետյակովյան պատկերասրահի Վրուբելյան դահլիճում, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը նկարը հանձնեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին: Սակայն, մինչ Երևանյան իր թանգարան վերադառնալը, բզկտված նկարը Տրետյակովյան պատկերասրահում ենթարկվեց նրբագույն և արհեստավարժ վերականգնման: Պատկերասրահի 18-րդ դարի-20-րդ դարակգրի գծանկարի վերականգնման բաժնի վերականգնողների բարձր մասնագիտական



հմտությունների շնորհիվ նկարը ձեռք բերեց նախնական տեսքը: Այն կարծես «վերածնունդ» ապրեց:

Իր ելույթում պատվիրակության ներկայացուցիչ Սերոբ Անտինյանը նշեց, որ այս դեպքը գողացված և ապօրինի արտահանված մշակութային արժեքների՝ տիրապետող երկիր վերադարձի համատեքստում երկու երկրների միջև միջազգային համագործակցության և գործընկերության լավագույն դրսևորում է:

Նման հաջող համագործակցության մասին հաղորդումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնից, կարծում ենք, դրական ազդակ է միջազգային մշակութային գործակցության ոլորտում մեր երկրի արձանագրած հաջողության առումով և անկասկած բարձրացնում է Հայաստանի՝ որպես գործընկեր պետության միջազգային վարկն ու հեղինակությունը:

Ելույթի վերջում ցուցադրվեց գրաֆիկական աշխատանքի վերականգնման և վերադարձի մասին պատմող տեսահոլովակ՝ փոքրիկ գեղարվեստականացրած ավարտով: Զեկույցի տեքստ ամբողջությամբ տեղադրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական կայքում՝

<http://www.unesco.org/new/en/culture/themes/illicit-trafficking-of-cultural-property/subsidiary-committee/6th-sc-session-2018/>

Տեսանյութը նույնպես փոխանցվել է և, Քարտուղարության հավաստիացմանը, կտեղադրվի երկշաբաթյա ժամկետում:

7. Մշակութային արժեքների պահպանության և ապօրինի տեղաշարժի կանխարգելմանն ուղղված միջոցառումների համատեքստում զեկույցներ ներկայացրեցին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործընկեր կազմակերպությունները:

**Եվրոպական միությունը (EU)** ներկայացնող ելույթում ներկայացվեցին մշակութային արժեքների ապօրինի տեղաշարժը կանխարգելող ծրագրերը: Նշվեց, որ Եվրոպական միությունը նշված գործառույթն իրականացնում է հիմնականում չորս ուղղություններով՝ օրենսդրության մշակում (օրենսդրական կարգավորումներ), ԵՄ շրջանակներում ապօրինի առևտրի կանխում և կանխարգելում, մաքսային հսկողություն (միջոցներ) և միջազգային համագործակցություն:

Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է մշակութային արժեքների միայն արտահանումը և անդամ երկրներից ապօրինի դուրս բերված արժեքների վերադարձը: Ներկայացվեց Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող ծրագրերի մասին տեղեկատվություն: 2018թ. Եվրամիության կողմից հռչակված է մշակութային ժառանգության եվրոպական տարի:

**ԻՆՏԵՐՊՈԼԻ (INTERPOL)** զեկույցում ի թիվս կազմակերպության գործունեության սկզբունքների և հիմնական ուղղությունների, որպես հաջող գործողության օրինակ, ներկայացվեց մշակութային արժեքների ապօրինի շրջանառության դեմ իրականացված Պանդորա (PANDORA) գործողությունը: Օպերատիվ միջոցառումները, որն իրականացվել էր նախորդ տարիներին, մասնակցել էին Կիպրոսի և Իսպանիայի ոստիկանության ստորաբաժանումները: Գործողության արդյունքում ձերբակալվել են ավելի քան 70 անձ, բռնագրավվել են ավելի քան 3500 մշակութային արժեք և արվեստի գործ, դրանց մոտ կեսը՝ հնագիտական իրեր և առարկաներ: Խիստ հսկողության և ստուգման ուժեղացում է ներթարկվել գրեթե 100 հազար սահմանային անցակետ, այդ թվում՝ նավահանգիստներում և օդանավակայաններում:

**Համաշխարհային մաքսային կազմակերպության (WCO)** զեկույցը վերաբերում էր ազգային մաքսային ծառայությունների կարողությունների զարգացմանն ու այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներին: Նշվեց մաքսային ծառայությունների աշխատակիցների վերապատրաստման և իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների կարևորությունը, խոսվեց այդ ուղղությամբ իրականացված աշխատանքների և կառուցակարգերի մասին:

**Թանգարանների միջազգային խորհուրդը (ICOM)** ներկայացրեց ոլսկային խմբում ընդգրկված մշակութային արժեքների Կարմիր ցանկերին և դրանց հետ արդյունավետ աշխատանքին վերաբերող զեկույց: Տրվեցին այդ արժեքների ընդգրկվածության չափորոշիչները, խոսվեց դրանց տիպաբանության մասին:

8. Նստաշրջանի ավարտին Օժանդակ կոմիտեի անդամ պետությունները **հաստատեցին քննարկված հարցերը բանաձևերի տեսքով**: Ամփոփիչ փաստաթղթերը Քարտուղարությունը հնարավորինս սեղմ ժամկետներում կտեղադրի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կայքէջում:



9. Փակմանը նախորդեց Օժանդակ կոմիտեի հաջորդ նստաշրջանի ժամկետների քննարկումը: Ներկաների համաձայնությամբ որոշվեց 1970 թ. կոնվենցիայի անդամ պետությունների հանդիպման **Օժանդակ կոմիտեի 7-րդ նստաշրջանը** գումարել 2019 թ. մայիսի 22-ից 23-ը ընկած ժամանակահատվածում:

**Մշակութային արժեքների՝ ծագման երկիր վերադարձի կամ ապօրինի յուրացման պարագայում դրանց ռեստիտուցիայի խրախուսման հարցերով միջկառավարական կոմիտեի (ICPRCP) 21-րդ նստաշրջան (մայիսի 30-31)**

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցերն էին՝

- ✓ Օժանդակ կոմիտեի ղեկավար կազմի՝ Բյուրոյի ընտրություններ (Նախագահ, փոխնախագահներ, զեկուցող),
- ✓ Քարտուղարկության զեկույցը Միջկառավարական կոմիտեի 20-րդ նստաշրջանի ընթացքում ընդունված որոշումների և հանձնարարականների կատարման վերաբերյալ,
- ✓ Կոմիտեի գործունեության կանոնակարգի փոփոխությունների նախագծի քննարկում,
- ✓ Կոմիտեում քննարկվող առանձին գործերի լսումներ, տեղեկատվական բնույթի գործեր,
- ✓ Մշակութային արժեքների ապօրինի տեղաշարժին առնչվող արդի հիմնախնդիրները,

1. Նստաշրջանը մեկնարկեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր քարտուղարի ներկայացուցչի խոսքով, ով քարտուղարի անունից ողջունեց Միջկառավարական կոմիտեի անդամ պատվիրակներին: Քարտուղարության կողմից ներկայացվեցին նստաշրջանի օրակարգային հարցերը, ընդունվող փաստաթղթերը: հակիրճ անդրադարձ արվեց Կոմիտեի կազմին, Բյուրոյի ընտրությունների կարգին, առանձին կանոնակարգային կետերին: Օրակարգերը հաստատվեցին:

2. Տեղի ունեցան Միջկառավարական կոմիտեի ղեկավար կազմի՝ Բյուրոյի ընտրություններ: Բյուրոյի նախագահի պաշտոնում Արգենտինան առաջադրվեց **Մեքսիկայի ներկայացուցիչ Ֆեդերիկո Սալասի** թեկնածությունը: Քարտուղարի (զեկուցող) պաշտոնում առաջադրվեց Իրաքի ներկայացուցչի թեկնածությունը: Որպես փոխնախագահներ, ըստ տարածաշրջանային խմբերի, առաջադրվեցին Պակիստանի (IV խումբ) (Ճապոնիայի կողմից), Բենինի (5A խումբ) (Չամբիայի կողմից), Հայաստանի (II խումբ) (Ռումինիայի կողմից) և Իտալիայի (I խումբ) (Թուրքիայի կողմից) ներկայացուցիչները: Առաջադրված բոլոր թեկնածությունները հաստատվեցին: Հաստատվեց **Մշակութային արժեքների՝ ծագման երկիր վերադարձի կամ ապօրինի յուրացման պարագայում դրանց ռեստիտուցիայի խրախուսման հարցերով միջկառավարական կոմիտեի Բյուրոյի կազմը՝**

a. **Նախագահ՝ Ֆեդերիկո Սալաս (անվանական)՝ Մեքսիկա**

b. **Չեկուցող՝ Ալի Ալ Հաքր (անվանական)՝ Իրաք**

c. **Փոխնախագահներ՝** Իտալիա, Հայաստան, Պակիստան, Բենին (ներկայացուցիչների միջոցով):

Այսպիսով, **Հայաստանի Հանրապետությունը ընտրվեց Միջկառավարական կոմիտեի ղեկավար կազմում՝ Բյուրոյում, որպես փոխնախագահ:**

3. Քարտուղարությունը ներկայացրեց Մշակութային արժեքների՝ ծագման երկիր վերադարձի կամ ապօրինի յուրացման պարագայում դրանց ռեստիտուցիայի խրախուսման հարցերով միջկառավարական կոմիտեի (ICPRCP) 20-րդ նստաշրջանի (2016թ. սեպտեմբեր) ընթացքում ընդունված որոշումների և հանձնարարականների կատարման ընթացքը, ինչպես նաև իրականացրած աշխատանքները: Նշվեց, որ աշխատանքներ են իրականացվել Կոմիտեի գործունեության արդյունավետության բարձրացման, դրանց հետ կապված առաջարկների մշակման և հաջորդ նստաշրջանին ներկայացման ուղղություններով: Մասնավորապես, Քարտուղարության կողմից ամփոփվել և 21-րդ նստաշրջանի լիազումար նիստի քննարկմանն են ներկայացվում անդամ պետությունների կողմից Կոմիտեի գործունեության կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին արված առաջարկները: Դրանք ներառված են նստաշրջանի օրակարգում: Քարտուղարությունը կարևորում է մշակութային արժեքների ռեստիտուցիայի և վերադարձի առաջավոր փորձի



փոխանակությունը և այդ նպատակով նախատեսում է հերթական նստաշրջանների ժամանակ հրավիրել դիսկուսիոն ֆորում այդ փորձի ներկայացման, հաղորդման և փոխանակման համար: Վերադարձի և ռեստիտուցիայի հարցերում համագործակցության և հաշտեցման գործընթացների ներքո Քարտուղարությունը ամեն կերպ խրախուսում է միջնորդության ինստիտուտը և կոչ անում անդամ պետություններին առավել ակտիվ հանդես գալ որպես միջնորդ այդ վեճերի կարգավորման շրջանակներում, որպես լուծման այլընտրանքային եղանակ:

4. Միջկառավարական կոմիտեի գործունեության կանոնակարգի փոփոխությունների նախագծի քննարկումները տևական էին և բազմաբնույթ առաջարկներ պարունակող: Քննարկման շրջանակներում անդամ երկրների ներկայացուցիչները ընդհանուր հայտարարի եկան մի քանի կետերի շուրջ: Արձանագրվեց, որ անհրաժեշտություն կա համապատասխանեցնել կանոնակարգը մշակութային սեկտորի այլ կոմիտեների կանոնակարգերի գործունեության սկզբունքների հետ: Նման տեսակետի համար հիմք է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր վերաժողովի կողմից ընդունված՝ «ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավար մարմինների միասնական աշխատանքային մեթոդների և ընթացակարգերի վերաբերյալ» ընդունված խորհրդատվական բանաձևը:

Նշվեց փոփոխությունների վերաբերյալ ասոցացված անդամների կողմից ներկայացված առաջարկների ներառման հնարավորության կարևորությունը, ինչպես նաև որոշվեց, որ Կանոնակարգի փոփոխությունների նախագիծը մշակելու նպատակով արտաբյուջետային միջոցների առկայության պարագայում կստեղծվի աշխատանքային խումբ, որում կընդգրկվեն թե անդամ պետությունները, թե ասոցացված անդամները:

Առաջարկվեց անդամ երկրներին Կանոնակարգում լրացուցիչ փոփոխությունների առաջարկների դեպքում ներկայացնել դրանք Քարտուղարություն մինչև ս. թ. հոկտեմբերի 1-ը: Քարտուղարությունը կնախապատրաստի համապատասխան փաստաթղթային փաթեթ (նախագծեր), որոնք կներկայացվեն Միջկառավարական կոմիտեի 22-րդ նստաշրջանին:

5. Առանձին գործերի լուսման շրջանակներում ներկայացվեցին «Բրոկեն-Հիլի գանգի» (Չամբիան և Մեծ Բրիտանիա) և «Պարթենոնի քանդակի» (Հունաստան և Մեծ Բրիտանիա) գործերը:

«Բրոկեն-Հիլի գանգի» հայցը վերաբերում է 600-400 հազ. տարվա հնության բրածո գանգին (հոմոնիդների ընտանիքի առանձին տեսակին պատկանող), որը հայտնաբերվել է 1921 թ. Չամբիայում (այն ժամանակ Միացյալ Թագավորության գաղութ էր) պեղումների ժամանակ և որը ներկայումս գտնվում է Մեծ Բրիտանիայում: Գանգի վերադարձի պահանջով հայցը Կոմիտե է ներկայացվել 2016-ին, սակայն ժամկետների պատճառով ընդգրվել է 2018 թ. նստաշրջանում: ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալի կողմից Մեծ Բրիտանիայի դեսպանից ակնկալվեց սահմանված ժամկետում համապատասխան ստանդարտ ձևաչափի լրացում ի պատասխան հայցվոր կողմի դիմումի:

«Պարթենոնի քանդակի» գործը վերաբերում է Աթենքի հանրահայտ Պարթենոնի տարածքում հայտնաբերված քանդակի մի էլեմենտի (հեծյալի ոտնաթաթի հատված), որն արտահանվել է և ներկայումս գտնվում է Բրիտանական թանգարանում: Այս գործին վերաբերող հայցը ունի ավելի քան 20 տարվա պատմություն: Այն սահմանված կարգով Կոմիտե է ներկայացվել դեռևս 1984-ին, սակայն կողմերը միջ այժմ չեն եկել որևէ համաձայնության: Հունաստանի պատվիրակությունը մեծ ջանքեր է գործադրում, հորդորում և հետևողականորեն պնդում է, որ այն վերադարձվի Պարթենոն և որպես պատմական և մշակութային մեկ միասնական համալիր, վերականգնվի իր նախկին տեսքով: Մեծ Բրիտանիան պնդում է, որ այն պատշաճ պահպանվում է Բրիտանական թանգարանում, բաց է դիտարկման, այցելության համար և չի պատրաստվում քննարկել դրա՝ Հունաստանին վերադարձման հարցը:

Քարտուղարությունը խրախուսում է անդամ պետություններին ներկայացնել տեղեկատվական գործեր (information cases), հայցեր, որոնք առնչվում են երկրներից ապօրինի արտահանված մշակութային արժեքների վերադարձի կամ վերահանձնման պահանջներին: Այս համատեքստում Քարտուղարությունը կոչ է անում երկրներին ակտիվ կերպով իրականացնել երկկողմ խորհրդակցություններ և բանակցություններ առկա խնդիրներն ու պահանջները երկկողմ ձևաչափով արդյունավետ լուծելու նպատակով:



Ներկայացվեցին նաև վերադարձի և ռեստիտուցիայի օրինակներ (Վենեսուելա - Կոստա-Րիկա, ԱՄՆ - Լիբանան, Գվատեմալա - Գերմանիա, Ֆրանսիա - Եգիպտոս և այլն):

6. Մշակութային արժեքների ապօրինի տեղաշարժին առնչվող արդի հիմնախնդիրների թեմայով զեկույցներ ներկայացվեցին առցանց վաճառքների (on-line sales), դրանց հիմնական հարթակների (e-Bay) գործունեության, իրավական կարգավորումների, վերահսկման վերաբերյալ: Նշվեց, որ թեև այդ հարթակները կիրառում են տեղեկատվության (ինչպես մշակութային արժեքների, այնպես էլ օգտատերերի) ստուգման և վերահսկման, նույնականացման բազմաթիվ գործիքների, այնուհանդերձ դրանք չեն կարող երաշխավորել ապօրինի գործունեության ու գործարքների լիարժեք բացառումը:

Անդրադարձ կատարվեց տեխնիկական հատուկ միջոցների, և հատկապես ԱԹՄ՝ անօդաչու թռչող սարքերի (Unmanned aerial vehicle - UAV) գործածմանը, որպես լայն տարածքներում ապօրինի պեղումների վաղաժամ հայտնաբերման և կանխարգելման արդյունավետ միջոցների:

7. Նստաշրջանի ավարտին Միջկառավարական կոմիտեի անդամ պետությունները հաստատեցին քննարկված հարցերը բանաձևերի տեսքով: Փաստաթղթերը վերջնական տեսքով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կայքէջում կտեղադրվեն հնարավորինս սեղմ ժամկետներում:

8. Ավարտին քննարկվեցին Միջկառավարական կոմիտեի հաջորդ նստաշրջանի անցկացման ժամկետները: Որոշվեց կոմիտեի 22-րդ նստաշրջանը գումարել 2020 թ. մայիսին:

**1970թ. Փարիզի կոնվենցիայի շրջանակներում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր քարտուղարի կողմից կազմակերպված «Ընդհանուր մշակութային ժառանգությունը և մշակութային արժեքների տեղաշարժը» խորագիրը կրող կոնֆերանս (հունիսի 1)**

Կոնֆերանսի նպատակն էր մշակութային արժեքների ապօրինի տեղաշարժը վերահսկող իրավասու մարմինների ներկայացուցիչների, մասնագետների, գիտական շրջանակների հետ համատեղ քննարկել մշակութային արժեքների շարժը

կարգավորող հարցերը, դրանց հետ կապված խնդիրները ծագման և փաստացի գտնվող երկրների միջև երկխոսության, բարիդրացիության և փոխըմբռնման միջավայրում:

Հանդիսավոր բացմանը ներկա էին և ողջունի խոսք հղեցին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր քարտուղար Օդրի Ազուլեն, ապա Բենինի Հանրապետության նախագահ, Ն.Գ. Պատրիկ Թալոնը: Ելույթները վերաբերում էին մշակութային բազմազանությանը՝ որպես համաշխարհային մշակութային ժառանգության համատեքստում հարստության, այդ ժառանգության պահպանության գործում պետությունների պատրաստակամության մեծացմանը, երկկողմ ու բազմակողմ համագործակցության խթանմանը, իրավասու կառույցների միջև համագործակցության, փորձի փոխանակության ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ հնարավորությունների մեծացմանը:

#### • ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ


1. Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ մշակույթի նախարարության, որպես 1970 թ. Փարիզի կոնվենցիայի անդամ պետությունների Օժանդակ կոմիտեի (2015-ից) և Մշակութային արժեքների՝ ծագման երկիր վերադարձի կամ ապօրինի յուրացման պարագայում դրանց ռեստիտուցիայի խրախուսման հարցերով միջկառավարական հանձնաժողովի (2017 թ. նոյեմբերից) անդամ ունեցավ կանոնավոր մասնակցություն նշված հանձնաժողովների հերթական լիազումար նստաշրջաններին: ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի հետ հայաստանյան պատվիրակության կազմում, մշակույթի նախարարության ներկայացուցիչը իր մասնագիտական մասնակցությունը բերեց նստաշրջանների ընթացքում քննարկվող հարցերի, ընդունվող բանաձևերի, խորհրդատվական փաստաթղթերի մշակման և ընդունման գործում, ինչը



կարևոր է պատվիրակության լիարժեք և ընդգրկուն մասնակցության համատեքստում:

2. Որպես Կոնվենցիայի կիրարկման լավագույն փորձի օրինակ, ներկայացուցիչը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբոնից **հանդես է եկել զեկույցով՝** 2017 թվականին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տեղի ունեցած արդյունավետ համագործակցության վերաբերյալ: **Ցուցադրվել է նաև տեսանյութ**, որը զեկույցի հետ փոխանցվել է Քարտուղարություն՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական կայքում տեղադրելու նպատակով (*պաշտոնական կայքի հղումը՝ վերևում*):
3. Հայաստանի Հանրապետությունը 2017 թ. նոյեմբերին դառնալով **Մշակութային արժեքների՝ ծագման երկիր վերադարձի կամ ապօրինի յուրացման պարագայում՝ դրանց ռեստիտուցիայի խրախուսման հարցերով միջկառավարական կոմիտեի (ICPRCP) անդամ**, 2018 թվականի մայիսին, Կոմիտեի 21-րդ նստաշրջանում **ընտրվեց այդ Կոմիտեի ղեկավար կազմում՝ Բյուրոյում, որպես փոխնախագահ**:
4. Կոնվենցիայի կիրարկման արդյունավետության բարձրացմանը վերաբերող՝ Քարտուղարության կողմից ուղարկված **հարցաշարի** լրացման առնչությամբ հատուկ ընդգծվեցին այն պատշաճորեն լրացրած և ներկայացրած պետությունները, Կոնվենցիային միացած ավելի քան 130 պետություններից լրացված հարցաշարը Քարտուղարություն են **ներկայացրել միայն 40-ը (այդ թվում Հայաստանը)**, որոնք հանգամանալիորեն ներկայացրել էին դիրքորոշումներ և ուղղություններ (մանրամասն՝ վերոգրյալում):

Ստորագրություն

 / Ս. Ամբիսյան /  
06.06.2018թ